

ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՀՈՐԻՉՈՆ

ՅԱԻԵԼՈՒԱԾ «ՀՈՐԻՉՈՆ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ

Ապրիլ 2024

ՄԵՐ ԽՕՍՔԸ



Նշենք, թե թուրքերը չհասան իրենց նպատակին, որովհետև հայը անցնելով անապատը, յաղթահարեց բոլոր դժուարությունները եւ ոտքի կեցաւ: Ան իր աշխատասիրութեամբ, իր ամուր կամքին ու հաւատքին շնորհիւ ապրեցաւ ու բազմացաւ զինք հիւրընկալող երկիրներուն մէջ:

Այսօր ալ, շատ բան չէ փոխուած անցեալէն: Թուրքը այսօր եւս կը հետապնդէ իր բանթուրանական ծրագիրը, ունենալու մեծ երկիր մը, հասնելով մինչեւ Չինաստան: Մեզի կը մնայ ըլլալ արթուն, պահանջատէր եւ միասնակամ:



1915 Ապրիլ 24-ը անմոռանալի թուական մըն է Հայոց Պատմութեան մէջ: Իսկ համաշխարհային պատմութեան մէջ, քսաներորդ դարու առաջին ցեղասպանութիւնն է, որ անմարդկային ձեւով գործադրուեցաւ թուրք ջարդարարներու կողմէ, խլելով մէկուկէս միլիոն անմեղ հայերու կեանքեր:

Օսմանցի թուրքերուն համար, հայերուն ներկայութիւնը հայկական լեռնաշխարհին վրայ արգելք էր իրենց բանթուրանական ծրագրին: Այդ պատճառով անոնք տեղահանեցին ողջ ժողովուրդ մը իր դարաւոր հայրենիքէն, սպաննեցին ամէն տարիքի մարդիկը՝ ծերունիներ ու երիտասարդներ, պատանիներ ու մանուկներ: Սպաննեցին անգթօրէն այն միակ «մեղքին» համար, որ ՀԱՅ էին:

Եկէք դարձեալ յիշենք Հայոց ցեղասպանութեան 100-ամեակի կարգախօսը. «ԿԸ ՅԻՇԵՄ ԵՒ ԿԸ ՊԱՀԱՆՋԵՄ»: Եկէք դարձեալ կրկնենք, թե աշխարհի տարածքին ուր ալ ըլլանք, պիտի յիշենք գործադրուած ցեղասպանութիւնը, պիտի պահանջենք մեզմէ բռնի գրաւուած հողերը եւ տէրը պիտի ըլլանք մեր բոլոր իրաւունքներուն:



ԱՊՐԻԼ 24-Ը

Հայոց դէմ հալածանքներն ու անարդարութիւնները սկսած են 1860-ական թուականներուն: Խաբէբայ եւ ոճրագործ Սուլթան Համիտ խոստացած էր բարենորոգումներ կատարել երկրին մէջ սահմանադրութիւն հռչակելով: Իրականութեան մէջ սակայն, այդ սահմանադրութիւնը հայերուն համար եղած է թէ՛ կեանքի անապահովութիւն, թէ՛ ունեցուածքի անապահովութիւն:

1915-ի Ապրիլին շատ առաջ սկսած են հայերու դէմ հալածանքները, բայց Հայոց Ցեղասպանութեան պաշտօնական յիշատակի օրն է Ապրիլ 24-ը, որովհետև այդ օրը կը նշուի որպէս հայ մտաւորականներու ձերբակալութեան սկիզբ:

Օսմանեան կայսրութեան ներքին գործերու նախարար Թալիաթ փաշայի հրամանով, 1915 թուականի Ապրիլ 24-ի գիշերը, 235 հայ մտաւորականներ ձերբակալուեցան Պոլսոյ մէջ: Յետոյ այդ ձերբակալուողներուն ընդհանուր թիւը հասաւ 2345-ի: Անոնց մեծ մասը սպաննուեցան: Փրկուեցան շատ քիչեր, որոնց կարգին էին Կոմիտաս Վարդապետն ու Վրթանէս Փափագեանը:

ՃԱՆՉՆԱՆՔ ՄԵՐ ՄԵԾԵՐԸ



ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ (1820-1907)

Հայ ազգի ու հայրենիքի անկախության նուիրուած մեծանուն ազգային գործիչներէն մէկն է Ամենայն Հայոց Կաթողիկոս Մկրտիչ Խրիմեան: Անոր հանդէպ հայ ժողովուրդին սէրն ու յարգանքը անսահման եղած է այն աստիճան, որ զինք կոչած են «Հայրիկ»:

Հայոց աննման Հայրիկը ծնած է Վան, 1820-ին: Մանուկ տարիքէն որբացած է եւ յանձնուած հորեղբոր հոգատարութեան, որուն օգնութեամբ կրցած է ուսանիլ: 1847-ին անցած է Պոլիս, եղած է պատմութեան ուսուցիչ եւ շատ աշխատանք տարած է ազգային դաստիարակութիւն փոխանցելու երիտասարդներուն:

Հրատարակած է «Արծուի Վասպուրական» ամսագիրը: 1856-ին վերդարձած է Վան եւ ստանձնած է Վարազայ վանքի վանահայրութիւնը: Վանքին մէջ, ան հիմը դրած է հոգեւոր ժառանգաւորաց վարժարանին: Աւելի ուշ, ան ստանձնած է Տարօնի հոգեւոր առաջնորդի պաշտօնը եւ հրատարակած է «Արծուիկ Տարօնոյ» երկշաբաթաթերթը:

Ընտրուած է Պերլինի վեհաժողովի պատուիրակութեան նախագահ: Ժողովէն վերադարձին, ան արտասանած է «Թուրք Շերեփի» իր նշանաւոր քարոզը, պատգամելով հայ ժողովուրդին, որ առանց երկաթ շերեփի, այսինքն՝ առանց զէնքի ու զինեալ պայքարի, չկայ ազատութիւն:

Խրիմեան Հայրիկ վախճանած է 1907-ին, եւ իր աճիւններու դամբարանը կը գտնուի Ս. Էջմիածին Մայր Տաճարի մուտքին:



1915-Ի ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐ

Պէտք չէ մոռնանք, թէ ջարդերու ժամանակ, Հայաստանի կարգ մը շրջաններու մէջ, ուր կային զինուած ֆիտայիներ, տեղի ունեցան հերոսական ինքնապաշտպանութեան կոչումներ:

Վանի հերոսամարտը. տեւեց 1 ամիս: Արամ Մանուկեանի ղեկավարութեամբ Վանի բնակչութիւնը հերոսաբար կռուեցաւ եւ փրկուեցաւ կամաւորական խումբերու Վան մուտքով:

Տարօնի եւ Սասունի հերոսամարտերը. տեւեցին երեք ամիս: Սասնոյ լեռներուն վրայ ֆիտայիներ կռուելով մինչեւ իրենց վերջին փամփուշտը, դէմ դրին թշնամի զօրքին եւ հերոսաբար նահատակուեցան:

Շապին Գարահիսարի հերոսամարտը. այս հերոսամարտին ընթացքին հայեր բարձրացան Շապին Գարահիսարի բերդը եւ հոն ամրապնդուելով դէմ դրին թշնամիին: 27 օր դիմադրելէ ետք թրքական հզօր բանակին, երբ ուտելիքի եւ փամփուշտի պաշարը վերջացաւ, պզտիկ խումբ մը ճեղքելով թշնամիի զօրքը կրցաւ ազատիլ: Մնացեալ բոլորը ջարդուեցան:

Ուրֆայի հերոսամարտը. Ուրֆայի հերոսամարտին ընթացքին հայեր հերոսաբար դիրքեր բռնեցին Ուրֆայի հայկական թաղերուն մէջ: Անոնք երկու հանգրուանով յաջողեցան պարտութեան մատնել թրքական բանակը: Դիմադրեցին մինչեւ թշնամիի երրորդ յարձակումը՝ 11,000 զինուորներով, նոր թնդանօթներով ու նոր զինամթերքով: Շատ անհաւասար էին ուժերը, եւ հայերը առանց յանձնուելու պայքարեցան մինչեւ վերջին շունչ:

Մուսա Լեռան հերոսամարտը. տեւեց քառասուն օր: Մուսալեռցիներ բարձրացան լեռ եւ դէմ դրին թշնամիին: Անոնք ֆրանսական նաւերը տեսնելով, օգնութիւն խնդրեցին կարմիր խաչ դրօշը պարզելով: Այսպէս միայն 18 նահատակներ տալով կրցան փրկուիլ, հասնելով Եգիպտոս:

ՀԱՅ ԴԱՏԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ




Տարիներէ ի վեր, հայեր աշխարհի զանազան երկիրներու մէջ, մեծ աշխատանք կը տանին, որպէսզի օտար պետութիւններ ընդունին Թուրքիոյ գործած Հայոց ցեղասպանութիւնը: Այս հսկայական աշխատանքին նպատակն է ապահովել Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչումը: Հայ Դատի տարած խոնարհ այս աշխատանքը մասամբ իր արդիւնքը տուած է, որովհետեւ ներկայիս մեծ է թիւը այն երկիրներուն, որոնք ընդունած են Թուրքիոյ գործած ոճիրը: Սակայն նիւթական եւ տնտեսական հաշիւներ աւելի բարձր դասելով, կան տակաւին երկիրներ, որոնք չեն ուզեր ճանչնալ Հայոց ցեղասպանութիւնը:

Ահաւասիկ ցանկը այն երկիրներուն, որոնք ճանչցած են Հայոց ցեղասպանութիւնը

ՈՒՐՈՒԿՈՒԷՅ, ԿԻՊՐՈՍ, ՊՐԱՋԻԼ, ՅՈՒՆԱՍՏԱՆ, ՇՈՒԷՏ, ԳԱՆԱՏԱ, ԶՈՒԻՅԵՐԻԱ, ԼԵՀԱՍՏԱՆ, ԼԻԹՈՒԻԱ, ԳԵՐՄԱՆԻԱ, ՉԻԼԻ, ԲԱՐԱԿՈՒԷՅ, ՌՈՒՍԻԱ, ԼԻՊԻԱ, ԼԻԲԱՆԱՆ, ԻՏԱԼԻԱ, ՖՐԱՆՍԱ, ՉԵԽԻԱ, ԴԱՆԻԱ, ՊՈՒԼԿԱՐԻԱ, ՊՈԼԻԿԻԱ, ՍՈՒՐԻԱ, ԼԻԲԵՍԱՄՊՈՒՐԿ, ՊԵԼՃԻՔԱ, ԱՒՍՏՐԻԱ, ԼԱԹՎԻԱ, ՓՈՐԹՈՒԿԱԼ, ՍԼՈՎԱԷՐԻԱ, ՍԼՈՎԵՆԻԱ, ՎԱՏԻԿԱՆ, ՎԵՆԶՈՒԵԼԱ, ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ

ԻՄ ԺՈՂՈՎՐԴԻՆ (ՀԱՏՈՒԱԾ)



ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ

Չարմանքով եմ ես միշտ նայում քո անցեալին, քո անցեալին եւ տանջալից, եւ պանծալի:

Ինչպէս ես դու կտրել այդքան երկար ճամբայ, երբ նա՛ խճոտ, ու երկինքդ է եղել ամպած:

Ինչպէս ես դու, մեղուի նման, անգամ թռչնից Նեկտար քաղել, մեղր քամել դառնութիւնից՝

Պանդխտութեան քո կսկիծը դարձրել «Կռունկ» եւ «Հորովել» դարձրել վէրքդ, ցաւոյ խորունկ:

Հազար անգամ դու ընկնելով՝ ինչպէս ելար, Ո՞նց ապրեցիր՝ հազար անգամ երբ դու մեռար:

Ի՞նչ հրաշքով չմարեցիր, ինչպէս նրանք, Որ մե՛ծ էին, հրդեհ էին, իսկ դու՛ կրակ:

Բայց գիշերուայ մթութեան մէջ ահազարհուր Դու այնպիսի կրակ էիր, այնպիսի հուր,

Որ վառում էր պաղած քարին գրակալի, Շինականի ցուրտ հիւղակին կրակ տալիս:

Որ վառում էր քո դուստրերի մութ աչքերում, Արին դառնում որդիներիդ երակներում:

Որ օճախ էր, խաղաղ կեանքում խաղաղ օճախ՝ Թոնրի կրակ, ծխանի ծուխ, կերոն ու ջահ,

Բայց վրէժի ահեղ բոց էր ահեղ մարտում եւ հրախաղ, որ յաղթանակ էր աւետում...

Եւ չի մարել նա դարբերում մահամնայ, Մնացել է, որովհետեւ մի հուր էր նա,

Որ չի մարում օտար հողմից, այլ արծարծում, Եւ աւերիչ հրդեհի պէս չի տարածում...

ԱՆՄՈՌՈՒԿ ԾԱՂԻԿԸ



Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցի խորհրդանիշ ընտրուեցաւ անմոռուկ ծաղիկը: Այս ծաղիկը բոլոր լեզուներով ունի խորհրդանշական իմաստ՝ «Յիշել, չմոռնալ եւ յիշեցնել»: Անմոռուկ ծաղիկի ցօղունի բարձրութիւնը 5-էն 40 սմ է, տերեւները բահանման են կամ սրածայր: Անմոռուկը կը ծաղկի Ապրիլէն Օգոստոսի միջեւ: Այս ծաղիկի կարգ մը տեսակները դեղաբոյսեր են (որոնցմով կը պատրաստուին դեղեր) եւ մեղրատու են (այսինքն՝ մեղրի նեկտար արտադրող, մեղր տուող):

Հայաստանի մէջ անմոռուկ ծաղիկը կրնանք գտնել Վայքի, Արագածոտնի, Ուրծի եւ Արարատի մարզերուն մէջ:

Ըստ գերմանական աւանդութեան, երբ Աստուած անուանած է բոլոր բոյսերը, փոքրիկ ծաղիկ մը անուն չէ ստացած եւ ըսած է Աստուծոյ. «Մի՛ մոռնար ինձ, Տէր»: Աստուած այդպէս ալ պատասխանած է՝ «անմոռուկ»:


Բնութեան մէջ, այս ծաղիկը կարելի է գտնել երեք գոյներով՝ ճերմակ, կապոյտ եւ վարդագոյն: Սակայն Հայոց ցեղասպանութիւնը խորհրդանշող անմոռուկ ծաղիկին թերթերուն գոյնն է մանիշակագոյնը:

Հայոց ցեղասպանութիւնը խորհրդանշող անմոռուկ ծաղիկին հինգ գոյները եւս խորհրդանշական են:

Սեւը կը խորհրդանշէ սարսափն ու յիշողութիւնը ցեղասպանութեան մասին:

Դեղինը՝ արեւի լոյսը եւ ապրելու յոյսը:

Ճառագայթածեւ բաց մանիշակագոյնը՝ ցեղասպանութեան ճանաչումը:



Իսկ հինգ խոշոր մութ մանիշակագոյն տերեւները կը խորհրդանշեն հինգ ցամաքամասերը, ուր վերապրած հայեր կազմած են Սփիւռքի հայ գաղութները: Այդ մութ մանիշակագոյնը կը յիշեցնէ հայ առաքելական եկեղեցւոյ հոգեւորականներու հանդերձներու (զգեստներու) գոյնը, որովհետեւ հայը պահելով իր լեզուն եւ իր հաւատքը, պահեց եւ կը պահէ իր ինքնութիւնը:

ԱՐԱԳԻԼԸ



Հայաստանի մէջ կան մեծ թիով արագիլներ, որոնց կարելի է հանդիպիլ գրեթէ ամէն տեղ, յատկապէս Արարատեան դաշտին մէջ: Անոնք երկու տեսակ են, սպիտակ եւ սեւ:

Սպիտակ արագիլները աւելի շատ են: Անոնք իրենց բոյնը կը հիւսեն յաճախ տանիքներու, ծառերու, աշտարակներու, ժայռերու եւ սիւներու վրայ, օգտագործելով ճիւղեր, լաթեր եւ բոյսեր:

Սեւ արագիլները աւելի տարածուած են Սեւանայ լիճին մօտ: Անոնք կը նախընտրեն ապրիլ աղմուկէ հեռու, անտառներու մէջ՝ գետերու, ճահիճներու եւ լիճերու մօտ:

Այս գեղեցիկ թռչունները ունին երկար վառ կարմիր ոտքեր, լայն թեւեր եւ երկար կտուց: Անոնք կ'ուտեն միջատներ, ձուկեր, գորտեր, սողուններ, մուկեր եւ տարբեր տեսակի բոյսեր: Կը համարուին օգտակար թռչուններ, որովհետեւ կ'ոչնչացնեն գիւղատնտեսութեան վնասակար բոլոր միջատները:

Արագիլը գաղթող թռչուն է. ան ամէն ձմեռ կը գաղթէ դէպի տաք երկիրներ եւ գարնան հետ կը վերադառնայ Հայաստան: Հայեր կը սիրեն արագիլը եւ կը հաւատան, որ երբ ան բոյն կը շինէ, երջանկութիւն եւ յաջողութիւն կը բերէ տանտէրներուն:

Արագիլը սիրոյ եւ հաւատարմութեան խորհրդանիշ է: Հայ գրողներ գովերգած են զայն հեքիաթներու, երգերու եւ բանաստեղծութիւններու մէջ:

ՀԱՐԻՍԱ

Հարիսան հայկական ասանդական ճաշատեսակներէն մէկն է, որ կը պատրաստուի ցորենով եւ հաւու, ոչխարի կամ հորթուկի միսով եւ մսաջուրով: Խառնուրդը եփելէն ետք, վրան կը լեցնեն հալած կարագ եւ համեմունք:

Անցեալին, հերոսամարտերու ընթացքին, երբ գիւղացիները թշնամիին կողմէ պաշարուած կ'ըլլային միայն ցորեն ու ոչխարի կամ այծի միս կ'ունենային եւ անոնցմով կը պատրաստէին սնունդով լեցուն հարիսան:



Մեր պապերէն մեզի հասած հարիսան դարձած է հայ ժողովուրդի միասնութեան եւ մշակութային ինքնութեան խորհրդանիշ: Այս համեղ ճաշը կը պատրաստուի ժողովրդական տօներու եւ կարգ մը եկեղեցական տաղաւարներու ժամանակ. օրինակ՝ Խաչվերացի, Ս. Աստուածածնայ եւ Վերափոխման տօներուն: Այս տաղաւարներու նախօրեակին, ոչխարներ կը նուիրուին եկեղեցոյ, որպէս մատաղ, ապա եկեղեցիի շրջափակին մէջ, մեծ թիով խոշոր կաթսաներ կը զետեղուին փայտէ կրակարաններու վրայ, որոնց մէջ կ'եփուին ցորենն ու միսը մինչեւ առաւօտ: Յաջորդ օրը պատարագի ընթացքին հարիսան կ'օրհնուի եւ կը բաժնուի հաւատացեալ ժողովուրդին:



Հանելուկներ

- 1 - Ո՞ր բառն է, որ սխալ գրուած է բառարանին մէջ:
- 2 - Վիզ ունիմ, բայց գլուխ չունիմ,
Թեւ ունիմ, բայց ձեռք չունիմ,
Ի՞նչ եմ:
- 3 - Շատախօսը դժուար ամսուան ընթացքին ամէնէն քիչ կը խօսի:
- 4 - Փոքրիկ արտ մըն է,
Ճերմակ ձիւնի պէս,
Հոն ցանուած են սելուկ հունտեր,
Գիտցա՞ք ինչ է:
- 5 - Փետրուարին մէջ զիս 2 անգամ կը տեսնէք,
Մարտին մէջ 1 անգամ,
Իսկ Մայիսին՝ ոչ մէկ անգամ:
Ի՞նչ եմ:

Ո՞Վ Կ'ՈՒԶԷ ԲԱԶՄԱԳԷՏ ԸԼԼԱԼ

1-Հայոց ցեղասպանութեան 100-ամեակի կարգախօսն է...

- Ա. «Կը յիշեմ ու կը պահանջեմ»:
- Բ. «Ապրինք ու ապրեցնենք հայ լեզուն ու հայ մշակոյթը»:
- Գ. «Պայքար մինչեւ յաղթանակ»:

2- Հայոց ցեղասպանութեան պաշտօնական յիշատակի օրն է...

- Ա. Մարտ 21-ը:
- Բ. Ապրիլ 24-ը:
- Գ. Մայիս 3-ը:

3- Թալիաթ փաշայի հրամանով, 1915 թուականի Ապրիլ 24-ի գիշերը, քանի՞ հայ մտաւորականներ ձերբակալուեցան միայն Պոլսոյ մէջ:

- Ա. 35
- Բ. 235
- Գ. 100

4-Ո՞վ էր Վանի հերոսամարտի ղեկավարը:

- Ա. Հրայր Դժոխք
- Բ. Դրօ
- Գ. Արամ Մանուկեան

5- Ո՞ր հերոսամարտին ընթացքին կարմիր խաչ դրօշը տեսնելով, ֆրանսական նաւեր օգնութեան հասան:

- Ա. Շապին Գարահիսարի
- Բ. Մուսա լեռան
- Գ. Ուրֆայի

6- Հայ Դատի աշխատանքներէն մէկն է ապահովել Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչումը:

- Ա. Ճիշդ
- Բ. Սխալ

7-Ո՞ր ծաղիկը ընտրուեցաւ Հայոց ցեղասպանութեան 100-ամեակի խորհրդանիշ:

- Ա. Կակաչ
- Բ. Յասմիկ
- Գ. Անմոռուկ

8- Ի՞նչ կը խորհրդանշէ անմոռուկ ծաղիկին դեղին գոյնը:

- Ա. Արեւի լոյսը եւ ապրելու յոյսը:
- Բ. Սարսափն ու յիշողութիւնը ցեղասպանութեան մասին:
- Գ. Ցեղասպանութեան ճանաչումը:

9- Հայաստանի մէջ կան երկու տեսակ արագիլներ: Անոնց դժուար տեսակը աւելի շատ է:

- Ա. Սպիտակ
- Բ. Սեւ
- Գ. Դեղին

10-Ո՞վ հրատարակած է «Արծուի Վասպուրական» ամսագիրը եւ «Արծուիկ Տարօնոյ» երկշաբաթաթերթը:

- Ա. Արամ Մանուկեան
- Բ. Խրիմեան Հայրիկ
- Գ. Մկրտիչ Փորթուգալեան

Հանելուկներուն պատասխանները

- 1-«Սխալ» բառը
- 2-Շապիկ
- 3-Փետրուար
- 4-Գիրք
- 5-«ր» տառը

